

այլ եւ «հաւաստի նշան որ հողատիրական համայնական կարգերը գոյութիւն են ունեցել նաեւ հին Հայաստանում»:

Բայց ինչպէ՞ս հաշտեցնել համայնական հողատիրութիւնը թագաւորի իրաւունքների հետ: Ահա Տրդատը համայնքներից խլում է հող եւ տալիս եկեղեցիների սպասաւորներին: Նշանակում է, թագաւոր գերազոյն սեպհականութեան իրաւունք ունէր հողերի նկատմամբ: Փոյթ չէ. «համայնքները տնտեսապէս ենթարկուած լինելով թագաւորի կամ նախարարների իշխանութեան, կարող էին միաժամանակ պահպանած լինել համայնական հողատիրութեան որոշ կարգեր»:

Նոյն բանասէրն է, որ յարուցանում է այս հարցերը եւ պատասխանում ուր մոլոր, եւ յետաձգում, որ ուրիշ անգամ լուծէ բարդ հանգույցները: Դարձեալ դառնում է նոյն «հող երդոյ» գիւտին, որ նրանից ճմլէ մի նոր ճշմարտութիւն, այն է՝ «հող երդոյ» հողաբաժինը կոչում էր իրրեւ թէ վիճակ: Յարդ կարծել էր տալիս որ հող երդոյ հէնց գիւղական յատուկ հողաբաժինն է, այժմ դուրս է գալիս որ յատուկ հողաբաժինն ուրիշ անուն ունի, որ է վիճակ:

Նախ՝ հերքում է մեր թուոցիկ մի խօսքը: Մեր ժողովուրդի մէջ առանձին բառ չկայ տան հողաբաժնի համար: Սովորաբար ասում են, այս ինչի հողը, արտը, եւ նման ընդհանուր բառեր: Արդեօք հնո՞ւմն էլ այդպէս է եղել: Աչքի առաջ ունենալով եղիչէի մօտ պարսիկ մարզպանի հրաւերը, այն միտք էինք յայտնել, որ «կեանք, արար, կալուած» բառերը, որ այդտեղ գործ են ածւում ազատների, շինականների եւ եկեղեցականների գոյքի նշանակութեամբ, թերեւս երբեմն յատուկ լինէին գիւղական հողաբաժնի:

Արդեօք այս գէպը կարելի է որոշել գիւղական հողի իրաւական բնոյթը: Մի հարց, մի ենթադրութիւն, որն եթէ հետաքրքրութիւն ունի, այդ աւելի հաստատումն է քան հերքումը: Արար, որ դրաբարում զանազան նշանակութիւն ունի, իսկ ժողովրդի բերանում մնացել է միայն «արար աշխարհ» ասացուածքում, հասարակ բառ չէ երեւում:

Փաւստոս եւս ասում է որ Արշակի թագա-

ւորութեամբ խաղաղացաւ երկիրը «ժողովեցան ամենայն թագուցեալքն փախուցեալք կորուսեալք երկրին Հայոց ... եւ յայնմ հետէ բնակեալք խաղաղութեամբ վայելեալք յերաքանչիւր յարարս իւրեանց»:

Չեմ կարծում, որ խօսք միայն շարժական գոյքի մասին լինի: Սովորական բառ չէ թրւում նշանակէ կեանք գոյքի իմաստով, իսկ կալուած յար եւ նման է եւրոպական tenureին:

Պ. Մանանդեանը սիրում է ճրագներ վառել արեւի լոյսին: Երկար ու բարակ վկայութիւններ է բերում, որ այդ բառերը հողի իմաստ չունին, որ կեանք համապատասխանում է յոյն bios, որ Աւետարանում ապրուստի մտքով է գործածուած: Հետեւապէս արհեստական բառ է: Կարելի է, բայց անհնար չէ նաեւ այն, որ հայերէնում արդէն այդպիսի իմաստ ունեցել է որ յոյն bios այդպէս ևն թարգմանել:

Ամէն պարագային կարեւորն այս չէ, այլ այն որ իմ որոնած բառս, Մանանդեանի կարծիքով, «վիճակ»ն է: Եւ իրրեւ ապացոյց քաղում է Հայկազեան բառգիրքից Մխիթար Գոչի մի խօսքը (Երեմիայ մարգարէի մեկնութիւնից). «վիճակ զանդաստանս սովոր եմ ասել, եւ մեմք սովոր եմք զժողովուրդս վիճակ կոչել»:

Այս վկայութիւնը «պարզ ցոյց է տալիս որ վիճակ սովորաբար գործ է ածուել անդաստանների, այսինքն՝ արտերի կամ վարելահողի համար», եզրափակում է պ. Մանանդեան:

Դժուար թէ կարելի է աւելի դաւաճան օրինակ բերել քան այս վկայութիւնը, որի իմաստը չէ հասկացել պ. Մանանդեան: Մխիթար Գոչի խօսքը Ս. Գրքի մասին է. Ս. Գիրք «սովոր են ասել վիճակ զանդաստանս», եւ ոչ թէ հայերը: Իսկ մեք, հայերս, «սովոր եմք զժողովուրդս վիճակ կոչել»:

Բոլորովին հակառակ հետեւանք. հայերը անդաստանին վիճակ քնն ասել:

Սրանով ընկնում են եւ միւս երկու ապացոյցները, որ քաղած են Ս. Գրքից: Հարկ ենք համարում սակայն կանգ առնել նրանցից մէկի վերայ, այն է՝ որ Ս. Գրքում յունական schoinismos բառը հայերէն թարգմանուած է վիճակ: Եւ որովհետեւ յոյն բառը նշանակում է